ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

2013-2016ԹԹ.

Կազմեց համայնքի ղեկավար Պետրոս Քոչինյանը

Քննարկվել և հաստատվել է Վահագնի համայնքի ավագանու 2013թ-ի մարտի 13-ի նիստի թիվ 05-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Առանձին բնագավառներում առաջնահերթ խնդիրների, ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները՝

Հավելված – 1. *Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը*

Հավելված – 2. *Համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքը*

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Տեղական ինքնակառավարման մարմիններում արդյունավետ կառավարում իրականացնելու գլխավոր պայմաններից մեկը՝ գործունեության համաչափ ծրագրավորումն է գալիք ժամանակաշրջանի տարբեր հատվածներով: Սահմանափակ ֆինանսների արդյունավետ ծախսումը, նոր միջոցների ներգրավումը հարկերի հավաքագրմամբ, կնպաստեն համայնքի առաջնահերթ խնդիրների լուծմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Ռազմավարական քաղաքականության տեսանկյունից Վահագնի համայնքի քառամյա ծրագրի հեռանկարային ուղղությունները հետևյալն են.

1. Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի իրականացում:
2. Մշակույթային համակարգի բարեփոխում, Կրթամարզամշակութային համալիրի կառուցում :
3. Ներհամայնքային ճանապարհների վերականգնում, ասֆալտապատում, փողոցների ընթացիկ վերանորոգում և լուսավորում
4. Եկեղեցու կառուցում և շրջակայքի բարեկարգում
5. Գործազրկության կրճատում, աշխատատեղերի ստեղծում
6. Բնակչության իրավունքների պաշտպանություն
7. Կոմունալ ծառայությունների բարելավում

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ Է

ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1. Գյուղատնտեսության զարգացմանը, գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը և կոլեկտիվների ստեղծմանը
2. Բնակչության սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավմանը
3. Բնակչության ֆոնդի ավելացմանը, բնակչության արտագաղթի պակասեցմանը
4. Նախադպրոցական, դպրոցական կրթության բարեփոխմանը, մշակութային, մարզական և սպորտային դաստիարակությանը
5. Տրանսպորտային սպասարկման բարելավմանը, փողոցների բարեկարգմանը
6. Համայնքում աղբահանության կազմակերպման և սանիտարահիգենիկ պայմանների ստեղծմանը:
7. Արտակարգ իրավիճակների վերացմանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա 2013-2016թթ. ծարագրում ներառված են համայնքի հիմնական խնդիրները:

Համայնքային զարգացման քառամյա ծրագիրը հրապարակվում է համայնքի զարգացման ընդհանուր խնդիրների մասին պատկերացում կազմելու, առաջիկա 4 տարում ռեալ ծրագրեր և բյուջե կազմելու, տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները կոորդինացնելու համար:

Ծրագրում ներկայացված են հետևյալ փաստաթղթերը.

1. գյուղապետի ուղերձը
2. Համայնքի մասին ընդհանուր տեղեկատվություն
* պատմական ակնարկ
* ժողովրդագրություն
* տեղական ինքնակառավարման մարմիններ
* կրթություն, մշակույթ, սպորտ

* բնակարանաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն, ճանապարհներ
* հողօգտագործում, գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն
* տնտեսության զարգացում
* առողջապահություն, սոցիալական վիճակ
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
4. Առաջնահերթ ծրագրերի կոնկրետ խնդիրների ձևակերպումը ըստ առանձին բնագավառների
5. Բյուջեի ֆինանսական ցուցանիշների վերլուծություն ըստ տարիների
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների, գույքի առկայությունը
7. Հավելված գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքի մասին
8. Հավելված գյուղապետարանի ենթակա կառույցների մասին

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԿԼԻՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղը հիմնադրվել է 1805թ.-ին, գտնվում է մարզկենտրոնից 23կմ հեռավորության վրա՝ Փամբակ գետի ստորին հովտում, Վանաձոր-Ալավերդի մայրուղու ձախ կողմում: Համայնքն իր վարչական տարածքով սահմանակից է Զորագյուղի, Անտառամուտի, Եղեգնուտի, Վահագնաձորի համայնքների վարչական տարածքներին: Համայնքին մոտ գտնվող երկաթուղային կայարաններն են՝ Վահագնաձոր-5կմ եւ Թումանյան-7կմ: Հարավային կողմով համայնքն իր վարաչական տարածքով սահմանակից է նաեւ պետական ֆոնդի հողերին:

Աշխարհագրական դիրքը լեռնային է, գտնվում է ծովի մակերեւույթից 10935 մ բարձրության վրա: Ձմեռը տեւում է 140-160օր: Նվազագույն ջերմաստիճանը՝ -28C է, առավելագույնը՝ մինչեւ +38C: Տարեկան տեղումները քիչ են, վերջին տարիներին ձյուն քիչ էր գալիս: Համայնքի ցանքատարածությունները հաճախ են տուժում սելավներից, կարկուտներից, երբեմն էլ՝ երաշտից: Համայնքը

համարվում է 1988թ. երկրաշարժից 95% ավերված, որի վերականգնման աշխատանքները դեռեւս չեն ավարտվել: Համայնքի կենտրոնական մասում գտնվում է 1850թ. կառուցված եկեղեցին, որն այժմ կիսաքանդ վիճակում է: Հայրենական Մեծ պատերազմում զոհված Վահագնեցիների հիշատակին (1973թ.) կառուցված Վահագն վիշապաքաղ հուշարձանը կից թանգարանի հետ եւս ունի վերանորոգման կարիք: Համայնքի տարածքում կան բազմաթիվ խաչքարեր եւ կիկլոպյան դարաշրջանի ամրոց:
Ոռոգման ջուր չունենալու պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել գյուղ, մթերքների արտադրությունը:
Հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, կաղամբի եւ այլ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ: Այս արտադրությունը կախված է բնության քմահաճույքից: Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ձու, մեղր: Երաշտի տարիներիս անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի եւ խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը: Համայնքն ունի գյուղ.տեխնիկայի եւ պահեստամասերի կարիք:
Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց: Այն նորակառույց է ունի 164 աշակերտ: Դպրոցն ունի 23 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 8 աշակերտ: Լավ վիճակում է դպրոցի խմելու ջրի ցանցը: Դպրոցն ունի մարզադահլիճի , տեխ.միջոցների եւ դիդակտիկ նյութերի կարիք, ինչպես նաեւ որոշ առարկաների մասնագետների պահանջ: Համայնքը չունի մշակույթի տուն, որի պատճառով համայնքը զրկված է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից:
Գյուղում գործում է առողջապահության կենտրոն, որը գտնվում տնակային պայմաններում: Այն սպասարկում է նաեւ շրջակա գյուղերին: Կարիք կա կառուցել քարաշեն առողջության կենտրոն կամ վերանորոգել գործողը: Առողջության կենտրոնն ունի 9 աշխատող:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի մշտական բնակչության ընդհանուր թիվը	1249
. տղամարդ	655
. կին	594
. նախադպրոցական տարիքի (0-5 տարեկան)	58
. դպրոցական տարիքի (6-17 տարեկան)	192
. միջին տարիքի (18-62 տարեկան)	799
. 62 տարեկանից բարձր	200
. ընտանիքների թիվը	375
. գրանցված ընտրողների թիվը	846

Բնակչության սոցիալական կազմը

1. Կենսաթոշակառուներ, որոնցից՝		183
	հաշմանդամներ (1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)	21
	միակողմանի ծնողազուրկ երեխաներ	7
	երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	-
	մանկուց հաշմանդամ երեխաներ	6
	միայնակ կենսաթոշակառուներ	17
	զոհված ազատամարտիկների ընտանիքներ	-
2.	Պատերազմի մասնակիցներ, վետերաններ, որոնցից՝	4
	ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ վիրավորված ազատամարտիկներ *(1-ին, 2-րդ, 3-րդ խմբի)*	-
3.	Փախստականներ *(մարդ)*	-
4.	Բռնադատվածներ	2
5.	Բազմազավակ ընտանիքներ *(3 և ավելի անչափահաս երեխա ունեցող)*	17
6.	Սոցիալական ծառայությունների Վանաձորի տարածքային գործակալության աղքատության ընտանեկան համակարգում հաշվառված ընտանիքների թիվը *(միջինը)*, այդ թվում՝	51
	ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	51
	միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը *(միջինը)*	-

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 778 մարդ, որոնցից վարձատրվող աշխատանքով զբաղված են 76 մարդ: Հիմնական մասը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների բարելավման, համայնքի հիմնախնդիրների լուծման համար Վահագնի համայնքի ղեկավարը, համայնքի նորընտիր ավագանին իր 5 անդամներով նպատակասլաց պետք է ծախսեն համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները: Անհրաժեշտության և հնարավորության դեպքում միջոցներ հայթայթելու պետբյուջեից, միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններից:

Գյուղապետարանի աշխատակազմն ունի հետևյալ կառուցվածքը.

գյուղապետի տեղակալ – 1 միավոր

գյուղապետի օգնական – 1 միավոր

աշխատակազմի քարտուղար – 0 միավոր

առաջատար մասնագետ – հաշվապահ – 1միավոր

I-ին կարգի մասնագետ – 1միավոր

II-րդ կարգի մասնագետ – 1միավոր

վարորդ-մեխանիզատոր – 1 միավոր

պահակ – 1 միավոր

տեխնիկական աշխատող – 1 միավոր

Աշխատակազմի աշխատողների ընդհանուր թիվը՝ 8 մարդ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ

Կրթական համակարգը ներառում է 1 միջնակարգ դպրոց: Մանկապարտեզը կոմունալ հարմարության, խմելու ջուրը սանիտարահիգենիկ պայմաններին չհամապատասխանելու և գույքի բացակայության պատճառով փակվել է, իսկ մասնաշենքը որպես համայնքի գույք հատկացվել է Վահագնիի գյուղապետարանին:

Ընդհանուր միջնակարգ կրթությունն իրականացվում է Վահանիի

միջնակարգ դպրոցում: Դպրոցը կառուցվել է 2000թ-ին: Դպրոցը համալրված է մասնագետ կադրերով, 1 ուսուցչին ընկնում է մոտ 8 աշակերտ, աշակերտների թիվը կազմում է 164, իսկ աշխատողներինը՝ 23, որից ուսուցիչ՝ 19: Դպրոցը ապահովված է հիմնական գույքով, սակայն համակարգիչների անբավարար քանակի պատճառով ինֆորմատիկայի դասերը ընթանում են ոչ լիարժեք: Դպրոցը գազաֆիկացված է, ունի մշտական խմելու ջուր, ունի լոկալ կոյուղի:

Դպրոցի ամենամեծ հիմնախնդիրներից այն է , որ չունի սպորտդահլիճ, չունի հանդերձարան, ունի վերանորոգման կարիք:

Սովորողների թվաքանակը ստաբիլ է: Սակայն քանի որ համայնքը քաղաքին կից է, նկատվում է դպրոցականների արտահոսք Վանաձոր քաղաքի տարբեր դպրոցներ:

Շրջանավարտները ուսումը շարունակում են հիմնականում Վանաձորի, ինչպես նաև հանրապետության այլ բուհերում ու կրթօջախներում:

Համայնքը չունի մշակույթի տուն, որի պատճառով համայնքը զրկված է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից:

ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Համայնքի բնակֆոնդը կազմում է 24837 քառակուսի մետր մակերես, որից առանձնատներ՝ 24077 քառակուսի մետր: Երկրաշարժից բնակարան կորցրած անձանց հիմնական մասին բնակարան է հատկացվել, ներկայումս բնակարանի կարիք ունեցող ընտանիքների թիվը կազմում է 20 : Վահագնի գյուղական համայնքը չունի աղբահանության կառույց:

Համայնքային ենթակայության ճանապարհները մոտ 43 կմ են, որից՝ բնահողային 43 կմ:

Համայնքի ուղևորատար երթուղիներում ընդգրկված ավտոբուսների քանակը՝ 2 է, մեկ ուղևորի տոմսի արժեքը՝ 300 դրամ:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հողային տարածքը 1476.30 հա է, որից 1112.18 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, 136.30 հա բնակելի շինությունների տակ հողեր, 17.56 հա արդյունաբերության, 10.53 հա էներգետիկայի, տրանսպորտի և կապի, 4.41 հա հատուկ պահպանվող տարածքների, 12.19 հա անտառային և ջրային ֆոնդ: Բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական աշխատանքներով՝ մասնավորապես նաև այգեգործությամբ: Իսկ հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն է: Վառելանյութի թանկության, տեխնիկայի պակասի, ստացված բերքի անեկամտաբերության պատճառով վարելահողերը վեր են ածվել խոտհարքների: Հիմնականում օգտագործվում են արոտավայրերը և խոտհարքները: Վերջերս մեծացել է գյուղ. նշանակության հողատեսքերի հետ վերադարձնելու հոսքը, վարելահողերը բերրի չեն, իսկ խոտհարքները հեռագնա են, ճանապարհները կիսաքանդ, որոշ մասերում անանցանելի: Չօգտագործելու պատրվակով էլ բնակիչների որոշ մասը հրաժարվում են հողի հարկի մուծումներից, որը պատճառ է սեփական եկամուտների հավաքագրման ցածր տոկոսի և ապառքների առաջացմանը: Անասնաբուծության հիմնական ճյուղը խոշոր եղջերավորներն են՝ 755 գլուխ, որից՝ կովեր 365 գլուխ, մոզի-332, երինջ-13, արտադրող ցուլեր-47 , 462 գլուխ՝ մանր եղջերավորներ, խոզերի թիվը կազմում է 36 գլուխ:
Համայնքում տարածված է մեղվապահությունը 618 փեթակ մեղու, թռչունների թիվը՝ 2079:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Համայնքում գործում է ''Վահագնի առողջության կենտրոն'' ՊՓԲԸ-ն: Հիմնական մասնաշենք չունենալու պատճառով այն տեղավորված է ժամանակավոր կառույցում : Ստացիոնար բուժման կառույց չկա:
''Վահագնի առողջության կենտրոն'' ՊՓԲԸ-ն գործում է հինգօրյա աշխատաժամանակով: Անձնակազմը հետևյալն է՝ 2 բժիշկ, 10

բուժքույր, 1 հաշվապահ, 1 վարորդ, 1 սանիտար: Մասնագետները անցել են ընտանեկան բժշկի վերապատրաստման փուլերը: Բուժ օգնությունը անվճար է : Կենտրոնը սպասարկում է Վահագնի համայնքի ենթաշրջանի 6 գյուղերին :

Աննկարագրելի ցածր է բնակչության սոցիալական վիճակը: Միակ զբաղմունք գյուղատնտեսությունը, անասնաբուծությունը անեկամտաբեր է: Աղքատության տոկոսը կազմում է ընդհանուր բնակչության 40%-ից ավելին: Բարձր է գործազրկությունը, որոշակի գումար համայնքի ընտանիքների բյուջեն համալրում են արտագնա աշխատանքներից: Ցածր է զբաղվածության տոկոսը: Վարձատրվող աշխատանքով ապահովված են մոտ 76 մարդ, հիմնականում կրթության, տեղական ինքնակառավարման մարմիններում, ենթակա կազմակերպություններում, սպասարկման ոլորտում: Սոցիալական նպաստների համակարգում ընդգրկված են 51 ընտանիքներ, որից նպաստառու են 51 ընտանիք, մինչդեռ համակարգի անկատարության պատճառով շատերը զրկված են օգնությունից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ, ինչպես նաև դրանից հետո ձեռք բերված գույքով՝ հետևյալ արտահայտությամբ.

* մանկապարտեզի շենք (որը հատկացված է գյուղապետարանին)– 1 միավոր
* ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ -43կմ
* ներհամայնքային կամուրջ (հետիոտն կամուրջ երկաթուղուն կապող)- 1 միավոր
* հուշարձան 1941-1945թթ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների - 1 միավոր՝ վատ վիճակ
* գերեզմանատուն – 2 միավոր
* կովանոց 100 գլխի համար - 1 միավոր
* կովանոց 200 գլխի համար - 1 միավոր
* հորթանոց 100 գլխի համար - 1 միավոր

* ջրհան կայան – 1 միավոր՝ վթարային
* տնակ գերմանական – 20 միավոր՝ վատ վիճակ
* ՆԻՎԱ ՎԱԶ 2121 – 1 միավոր՝ նորմալ վիճակում

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* բնակչության անապահովության, հողերի օգտագործման անարդյունավետության, ինչպես նաև համայնքից երկարատև բացակայության պատճառով չեն կատարվում հարկային պարտականությունները՝ հիմնականում հողային
* արտագնա աշխատանքը և բնակչության արտահոսքը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* գյուղը մոտ է գտնվում միջհամայնքային Վանաձոր-Ալավերդի խճուղային ճանապարհին, մշտական կապ ունի մարզկենտրոնի , մարզային և հանրապետության մյուս քաղաքների հետ
* համայնքը մեծմասամբ գազաֆիկացված է, համայնքում հեռախոսակապը նորմալ է և որակով
* գործող առևտրական օբյեկտները հիմնականում բավարարում են բնակչության պարենային պահանջները
* բարեխառն եղանակը և առկա արոտավայրերը հիմք են անասնաբուծության զարգացման
* գյուղում կա 1941-1945թթ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան-կոթող , բազմաթիվ խաչքարեր , կիկլոպյան դարաշրջանի ամրոցներ ի հիմքեր , որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

* ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների, փողոցների անմխիթար վիճակը,
* զբաղվածության ցածր մակարդակը, աշխատատեղերի պակասը
* բնակչության 40 %-ը սոցիալապես անապահով են
* համայնքում բարձր է արտերկիր արտագաղթը
* գյուղատնտեսական տեխնիկայի բացակայությունը, որը ազդում է գյուղատնտեսության զարգացման վրա
* Մշակույթի կենտրոնի շենք չունենալը

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Համայնքի ղեկավարը, ավագանին հաշվի առնելով բնակչության պահանջները, սահմանում են զարգացման հետևյալ ռազմավարությունը՝ համայնքը դարձնել բարեկարգ, բարելավել ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օժանդակել գյուղատնտեսական արտադրության ավելացմանը: Առաջիկա 4 տարում համայնքի հիմնական նպատակային խնդիրներն են.

* ներհամայնքային ճանապարհների բարեկանգնում, ասֆալտապատում
* Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան և կից թանգարանի վերանորոգում
* դպրոցի մարզադահլիճի կառուցում, գույքի և համապատասխան պարագաների ձեռք բերում
* սելավատարի և հեղեղատարների կառուցում

4. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ 1

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Նկարագիրը –Վանաձոր- Ալավերդի մայրուղուց համայնքի 1-ին փողոց թեքվող ճանապարհի հենց սկզբնական մասից գյուղամիջյան ամբողջ ճանապարհները անբարեկարգ են, կենտրոնական ճանապարհները ասֆալտապատվել են դեռևս խորհրդային տարիներին, իսկ ասֆալտի հետքը հազիվ է երևում , ավելնորդ է խոսել ոչ կենտրոնական ճանապարհների մասին: Համայնքային բյուջեից կամ համյնքի ղեկավարի ուժերով տարեկան պարբերաբար բարեկարգվում, խճապատվում են գյուղամիջյան որոշակի հատվածներ, սակայն թեք տեղանքի, սելավների պատճառով նորից քանդվում է:

Նպատակը – բարեկարգել գյուղի փողոցները և ճանապարհները, մաքրել, կառուցապատել սելավատարները, ասֆալտապատել կենտրոնական ճանապարհը,

խնդիրը – կատարել կենտրոնական ճանապարհների հիմնանորոգում՝ ասֆալտապատում կատարել համայնքի փողոցների խճապատում, հարթեցում : Նշված աշխատանքը հնարավոր չէ կատարել համայնքի բյուջեից: Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով:

արդյունքները – կբարեկարգվի համայնքի տարածքը, փողոցները, ճանապարհները, կապահովի տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին:

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԵՎ ԿԻՑ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Նկարագիրը – Հայրենական Մեծ պատերազմում զոհված Վահագնեցիների հիշատակին կառուցված Վահագն վիշապաքաղ հուշարձանը և կից թանգարանը կառուցումից հետո(1973թ.) չի վերանորոգվել , գտնվում է խարխլված վիճակում , կարք ունի հիմնական վերանորոգման :

Նպատակը – Վերանորոգել Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան-կոթողը , որի շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում

Խնդիրը –Հիմնական վերանորոգման աշխատանքը հնարավոր չէ կատարել համայնքի բյուջեից: Դիմել ՀՀ կառավարությանը, ֆինանսական աջակցություն ստանալու հարցով, ինչպես նաև կազմակերպել բարերարների կամ համայնքի կողմից ներդրումների հարցը :

արդյունքները – Ծրագիրն իրականացնելուց հետո համայնքում կզարգանա զբոսաշրջությունը:

ԾՐԱԳԻՐ 3

ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նկարագիրը – Վահագնի համայնքի դպրոցը չունի մարզադահլիճ

Նպատակը –

* ստեղծել աշխատանքի և ուսման համար նորմալ պայմաններ՝ ջեռուցում, հանդերձարան, լոգասենյակ,
* հնարավորությունների սահմաներում ստեղծել սպորտաձևերի խմբեր

* աջակցել համայնքի պատանիների և երեխաների առողջ ապրելակերպին

խնդիրը –

* կազմել մարզադահլիճի կառուցման և ջեռուցման համակարգի նախագիծ նախահաշիվ
* կառուցման ծրագրի համար դիմել այլ հիմնադրամների ու միջազգային կազմակերպությունների՝ ֆինանսավորելու համար:

արդյունքները –

* համայնքում կզարգանա սպորտը, կբացվեն նոր սպորտաձևերի խմբեր

ԾՐԱԳԻՐ 4

ՍԵԼԱՎԱՏԱՐԻ ԵՎ ՀԵՂԵՂԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ներկայացիրը –Լոռու մարզի Վահագնի համայնքի ճանապարհները անձրևներից եւ հեղեղումներից շարքից դուս են եկել սելավատարի բացակայության պատճառով, կենտրոնական ճանապարհները ասֆալտապատվել են դեռևս խորհրդային տարիներին, իսկ ասֆալտի հետքը հազիվ է երևում , ավելնորդ է խոսել ոչ կենտրոնական ճանապարհների մասին, որոնք հետյոտնի համար դարձել է դժվարանցանելի, իսկ տրանսպորտի համար՝անանցանելի:

Նպատակը - բետոնե կոնստրուկցիաներով եւ մետաղյա խողովակներով կառուցել սելավատար ճանապարհը սելավներից զերծ պահելու համար:

խնդիրը – Դիմել ՀՀ կառավարությանը, կամ հիմնադրամներին ու միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցություն ստանալու հարցով: Համայնքի բյուջեից կկատարվի ներդրում:

արդյունքները – Սելավատարների կառուցումից հետո կբարեկարգվի համայնքի ճանապարհները ու փողոցները :